ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԻՐԱԿԱՆ ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՀՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՕԼԻՄՊԻԱՅԻ «ՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Աշոտ Մանուչարյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ ashot.manucharyan.1959@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 24.06.2020, գրախոսվել է 30.09.2020, ընդունվել է տպագրության 03.11.2020

Ներածություն

Հայտնի է, որ Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմությունը» շարադրելիս, ի շարս գրավոր սկզբնաղբյուրների, օգտվել է նաև բանավոր ավանդազրույցներից, հատկապես ժողովրդական գրականության այն ավանդություններից, «որոնք կազմվել են 4-րդ դարում զանազան կրոնական և քաղաքական գործիչների»[1], ինչպես նաև նրանց «արարքների շուրջ հյուսված ժողովրդական աշխարհիկ ու կրոնական զրույցներից, լեգենդներից, վեպերից, անգամ երգերից և դրանց հիման վրա գրել իր պատմությունը»[2]: Այս պարագայում հնարավոր չէ խուսափել անճշտություններից, քանի որ բանավոր զրույցներում կերպարների հերոսացումը երբեմն ուղեկցվում է անցյալի իրական դեպքերն ավելորդ արտահայտչականությամբ օժտելու միտվածությամբ, որով կարող են խեղաթյուրվել պատմական իրադարձությունները: Այդպիսի խեղաթյուրումներից մեկն էլ Արշակ Բ թագավորի երկու կանանց՝ հայոց երկու թագուհիների՝ Փառանձեմի և Օլիմպիայի միջև հակասությունն է, որը խորանալով վերածվում է թշնամանքի՝ ունենալով ողբերգական ավարտ:

Պատմական վկայություններ

Հիշեցնենք, որ դավերի պատճառով իր եղբորորդի Գնելին սպանելուց հետո Արշակ թագավորը (345-368) տիրացավ նրա գեղեցկուհի կնոջը՝ Սյունյաց իշխանադուստր Փառանձեմին, բայց տեսնելով, որ սա

---

[1] Լեո 1967, 29:

[2] Հայ ժողովրդի պատմություն 1984, 452:

ատում է իրեն, «առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անդի կին 'ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի: Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն, և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա»[3]:

Ակնբախ է, որ հայոց Արշակ արքան հռոմեացի Օլիմպիային կնության է առել[4] ռազմաքաղաքական նկատառումներով՝ ամրապնդելու հզոր Հռոմի հետ դաշինքն ընդդեմ սասանյան Պարսկաստանի:

Գերմանացի արևելագետ, հայագետ Յ. Մարկվարտը, ըստ Հ. Մանանդյանի, հայոց թագավորի և Օլիմպիայի ամուսնությունը թվագրում է 357-ով, երբ Հռոմի Կոստանցիոս Ա կայսրը (337-361) «Հայաստան էր ուղարկել և տվել էր Արշակ Բ-ին իբրև ամուսին իր մեռած եղբոր՝ Կոստասի (337-350) նշանած Ոլիմպիային, որը պրետորյանների պրեֆեկտ Աբլաբիոսի դուստրն էր»[5]:

Այդ երկրորդ ամուսնությունից հետո, չհանդուրժելով մրցակցուհուն, ըստ Բուզանդի, «Փառանձեմն'ի մեծ նախանձու և ոխութեամբ գնայր ընդ Ողոմպինյոն, և խնդրէր սպանանել զնա դեղովք: Իբրև ոչինչ հնարս մեքենայից չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանավանդ 'ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ կամ զնոցին պարզեալ զգինի ճաշակէր, և եթէ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղօքն, ապա դրան երէց ոմն արքունի՝ որ էր 'ի ժամանակին յայն, որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն'ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա 'ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն: Զանարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով, որ ուրեք երբէք այսպիսի գործք յումեքէ 'ի վերայ երկրի ոչ գործեցան: Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման. Երէցն Մրջիւնիկ անուն, տալով յեկեղեցւոջն Ողոմպեայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, և սպանանէր: Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր, և

[3] Փավստոս Բուզանդ 1987, 192:

[4] Թեև երկկնությունը քրիստոնեորեն մերժելի է, բայց IV դ. վաղ միջնադարում գոյություն է ունեցել «երկկնության իրավունք» (տե՛ս ՀԺՊ 1984, 485):

[5] Մանանդյան 1978, 164:

յանօրէնն Փառանձեմայն պարգև առեալ չերիցուն զգեղն՝ ուստի իսկ ինքն էր 'ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին»[6]:

Պատմահայր Մովսես Խորենացին, կրկնելով Փավստոս Բուզանդին, ավելի հակիրճ է ներկայացնում պատմությունը. «Այս Փառանձեմ գործեաց զանլուր և զանկարելի չարիս, և զսարսափման լսողաց արժանաւոր: Անարժանիւ ոմամբ սուտանուն քահանայիւ ի կենաց դեղն զմահացուն խառնեալ՝ ետ Ողիմպիադայ առաջին կնոջն Արշակայ, և ելոյծ ի կենաց սակս տիկնութեանն մախանաց»[7]:

Յ. Մարկվարտը, ըստ Հ. Մանանդյանի, Օլիմպիայի սպանությունը հավանական է համարում կատարված 362 թվին, երբ Հռոմի կայսրն էր Հուլիանոս Ուրացողը (361-362), քանի որ ոճիրը չէր կարող իրագործվել Կոստանցիոսի կենդանության ժամանակ[8]:

Այդպիսով, մեր հայոց թագուհիներից մեկին վերագրվել է չարված մի ոճրագործություն, որը, որպես խարան, ավելի քան հազար վեց հարյուր հիսուն տարի ուղեկցում է այդ դժբախտ կնոջ անվանը: Այնինչ Փառանձեմը հայրենասեր հայ կնոջ հերոսական կերպար է, որը քաջաբար ու տոկունությամբ տասնչորս ամիս շարունակ պարսիկներից պաշտպանել է Արտագերս ամրոցը, ինչպես հիացմունքով նկարագրում է պատմիչ Փավստոս Բուզանդը[9]:

Միգուցե թունավորման փորձ եղել է, որը, սակայն, ողբերգական ավարտ չի ունեցել: Իրականում Օլիմպիան (ուղղափառ աղբյուներում նա կոչվում է Օլիմպիադա) չի մահացել: Դա պարզվում է Ուղղափառ եկեղեցու սրբուհի Օլիմպիադա Սարկավագուհու վարքագրությունից (սրբախոսություն, ագիոգրաֆիա): Հնարավոր է՝ անգամ թունավորման փորձ չի էլ եղել, այլ ամուսնու՝ Արշակ Բ-ի մահից հետո (368 թ.), երբ հայոց արքունիքում աճել է թագաժառանգի մայր Փառանձեմի ազդեցությունը, և առաջին տիկինը լինելու հարցում երկու թագուհիների միջև մրցակցությունը վերածվել է ակնհայտ թշնամության, Օլիմպիան իր համար անելիք չտեսնելով Հայաստանում՝ վերադարձել է Բյուզանդիա, որտեղ ամուսնացել է երկրորդ անգամ: Այդ երկրորդ ամուսնությունից ծնվել է Օլիմպիադա

[6] Փավստոս Բուզանդ 1987, 192-194:
[7] Մովսես Խորենացի 1981, 344:
[8] Մանանդյան 1978, 179:
[9] Տե՛ս Փավստոս Բուզանդ 1987, 262-265:

Սարկավագուհին (370-409), որը եղել է համաքրիստոնեական սուրբ Հովհան Ոսկեբերանի (347-407) օգնականն ու աշակերտուհին:

Ուղղափառ եկեղեցու Սրբերի վարքում՝ «Житія Святыхъ», կարդում ենք. «Олимпіада, дочь Евлавія, сначала была обручена съ младшимъ сыномъ Константина Костою, который послѣ отца царствовалъ въ древнемъ Римѣ; но онъ былъ убитъ до брака, а она была выдана за Арсака, царя арменскаго, съ которымъ недолго пожила, и овдовѣла, тогда Олимпіада вышла замужъ за… сенатора Анисія Секунда и родила святую Олимпіаду»[10].

Նույն տեղեկության մասին ավելի որոշակի կարդում ենք Ուղղափառ սրբերի վարքագրության մեկնաբանության մեջ. «Житие святой Олимпиады при всей его сказочной высоте поразительно документально.

Святая Олимпиада происходила по отцу от одной из самых знатных римских фамилий – князей Анасиев (Аницие в). Мать Олимпиады была дочерью епарха Авлавия (Аблабия), того самого епарха, к которому во сне явился святитель Николай и повелел отпустить из заточения трех оклеветанных мужей с угрозой, что в противном случае он будет съеден червями и вся семья его погибнет. Из жития Николая Чудотворца мы знаем, что епарх не ослушался святителя, а посему и не погибла его семья, но дала редкий плод благочестия в его внучке – святой Олимпиаде.

Мать святой, Олимпия, еще в детстве была обручена с Константом († 350), сыном императора Константина. Однако этот брак не состоялся из-за смерти Константа, и она вышла замуж за царя Армении Арсака (Аршака; † 367). Селевк Анасиев, проконсул, отец святой Олимпиады был вторым мужем ее матери»[11].

Համեմատական վերլուծություն

Այսպիսով, ուղղափառ աղբյուրներից ակնբախ է դառնում, որ հայոց թագուհի Օլիմպիան չի մահացել: Այսինքն՝ նրան չի սպանել (սպանությունը չի կազմակերպել) հայոց մյուս թագուհի Փառանձեմը: Ուրեմն, ինչպես որ ծանրագույն զրպարտություն է Պապ թագավորի (369-373) նկատմամբ, թե իբր նա ընթրիքի ժամանակ իր ձեռքով Ներսես Մեծ կաթողի-

[10] Житія Святыхъ 1910, XI, 598. Ուղղափառ եկեղեցին Սրբուհի Օլիմպիադա Սարկավագուհու հիշատակը նշում է նրա մահվան օրը՝ հուլիսի 25-ին:

[11] https://pravoslavie.ru/31501.html.

կոսին ըմպելիք է տվել և թունավորել նրան[12], այնպես էլ ստոր հերյուրանք է նրա մոր՝ Փառանձեմի հասցեին նույն՝ թունավորման զրպարտանքով Օլիմպիային սպանելու մեղադրանքը:

Մ. Օրմանյանը, որը հերքում է Ներսեսի թունավորման մտացածին պատմությունը և կաթողիկոսի մահվան պատճառը ենթադրում է սրտի[13] կամ թոքի անբուժելի հիվանդությունը, ինչը նրա համար ակնհայտորեն մակաբերվում է այդ ախտի դրսևորման ձևերից, երբ սրվել ու հանկարծահաս նոպա է առաջացրել հայոց հայրապետին Խախի հացկերույթի ժամանակ[14], չի հավատում Փառանձեմի մեղսունակությանը և Օլիմպիայի սպանության մեջ մեղադրում է Արշակ թագավորին[15]:

Օլիմպիա օրինավոր թագուհուն վերացնելով, ըստ Մ. Օրմանյանի, Արշակը փորձեց սիրաշահել Փառանձեմին՝ նրան տարփածուի կամ հարճի ստորին կարգավիճակից պետության առաջին տիկնոջ աստիճանի բարձրացնելով[16]: Բացի այդ, դրանով Արշակը լուծում էր նաև արտաքին քաղաքական խնդիր՝ իր դաշնակից Հռոմից, որտեղ Հուլիանոս Ուրացող կայսրը վարում էր քրիստոնեությունը մերժող և հեթանոսությունը վերակենդանացնելու քաղաքականություն՝ շրջադարձ կատարելով դեպի կայսրության ախոյան Պարսկաստան[17]:

Փառանձեմին վերագրելով չկատարված ոճրագործություն՝ զրպարտիչները դրանով ուզեցել են էլ՛ ավելի ընդգծել նրա որդու՝ Պապ թագավորի հասցեին մտացածին հանցանքը՝ ցույց տալու համար երկու ոճիրների նմանությունների միջև ժառանգաբանական կապը: Ավելին, արքայազնի մեջ ի սկզբանե բազմապիսի չարագործությունների սերմանողը համարել են հենց մորը. «Եւ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենևին յԱստծոյ ոչ երկնչէր, նուիրաց զնա դիւաց, և բնակեցին դևք բազումք՝ի մանուկն, և վարէին զնա ըստ կամաց իւրանց»[18]:

---

[12] Մանանդյան 1978, 216:
[13] Մուրատեան 1910, 147:
[14] Օրմանեան 2001, 243-244:
[15] Օրմանեան 2001, 204:
[16] Օրմանեան 2001, 202:
[17] Օրմանեան 2001, 203-204:
[18] Փավստոս Բուզանդ 1987, 240:

Եզրակացություններ

Ամփոփելով նշենք, որ ակնառու է թե՛ Պապին, թե՛ Փառանձեմին չկատարած թունավորումների մեջ մեղադրող շրջանակը՝ թագավորի ներքին քաղաքականությունից դժգոհ բանսարկուների մի ճղճիմ, նեղ խմբավորում, որը, չարահյուսելով զրպարտություններով լի պատմություններ՝ կարողացել է այդ սուտ պատումները ժողովրդի մեջ տարածել որպես ճշմարտություն այն աստիճան, որ պատմիչների համար դրանք դարձել են պատմական սկզբնաղբյուրներ: Այստեղ միանգամայն տեղին է նշել նարեկացիագետ, փիլիսոփա Հ. Միրզոյանի այն միտքը, թե բամբասանքն իր ուժով ու ազդեցությամբ անհամեմատ ավելի զորավոր է, քան անեծքը[19], որը հայոց Փառանձեմ թագուհու պարագայում չի մարում շուրջ հազար վեց հարյուր հիսունութ տարի:

Գրականություն

Լեո 1967, Երկերի ժողովածու, հ. 2, Միջին դարեր, Երևան, «Հայաստան», 788 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1984, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 692 էջ:

Մաղաքիա արքեպս. Օրմանեան 2001, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ» հրատ., 1870 սյուն:

Մանանդյան Հ. 1978, Երկեր, Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 445 էջ:

Միրզոյան Հ. 2018, Նարեկացու հասցեին հնչած բամբասանքների քննություն, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, N 3, էջ 59-74:

Մովսես Խորենացի 1981, Հայոց պատմություն քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբան.՝ Ստ. Մալխասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 588 էջ:

Մուրատեան Ե. 1910, Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, Հայկ. տպ. «Արաքս», 199 էջ:

Փավստոս Բուզանդ 1987, Հայոց պատմություն, բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր.՝ Ստ. Մալխասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:

Житія Святыхъ 1910, книга XI, Москва, изд. Моск. Синод. тип., 692 с.

[19] Տե՛ս Միրզոյան 2018, 61:

ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԻՐԱԿԱՆ ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՀՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՕԼԻՄՊԻԱՅԻ «ՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Աշոտ Մանուչարյան

Ամփոփում

Հայտնի է, որ V դ. հայ պատմիչ Փավստոս Բուզանդը «Հայոց պատմությունը» գրելիս օգտվել է ոչ միայն գրավոր սկզբնաղբյուրներից, այլև ժողովրդական բանավոր զրույցներից, լեգենդներից, երգերից: Վերջիններիս դեպքում տեղի են ունենում պատմական իրադարձությունների հետ կապված անճշտություններ, խեղաթյուրումներ: Պատմական խեղաթյուրումներից մեկը կապված է հայոց Արշակ Բ թագավորի (345-368) երկու կանանց՝ հայուհի Փառանձեմ և հռոմեուհի Օլիմպիա թագուհիների միջև թշնամության հետ: Թշնամանքը խորանում է այն աստիճան, որ Փառանձեմը իբր կազմակերպում է Օլիմպիայի սպանությունը՝ թունավորելով նրան՝ համագործակցելով պալատական երեց Մրջյունիկի հետ: Վերջինս հաղորդության հացին թույն է խառնում, եկեղեցում այն տալիս է Օլիմպիա թագուհուն և սպանում նրան:

Սակայն Ուղղափառ եկեղեցու «Житія Святыхъ» (Սրբերի վարքը) վարքագրությունից իմանում ենք, որ հայոց Օլիմպիա թագուհին իրականում չի սպանվել: Նա ամուսնու՝ Արշակ Բ-ի մահից հետո վերադարձել է Հռոմեական կայսրություն: Այստեղ ամուսնացել է երկրորդ անգամ և ծնել Ուղղափառ եկեղեցու սրբուհի Օլիմպիադա Սարկավագուհուն (370-409), որը եղել է սուրբ Հովհան Ոսկեբերանի (347-407) մերձավորագույն հավատարիմ օգնականն ու աշակերտուհին:

Մեր կարծիքով, Փառանձեմի ոճրագործության սուտ պատմությունը հորինվել է այն նույն շրջանակում, որտեղ դժգոհ լինելով նրա որդի, հայոց Պապ թագավորի (353-373) ներքին քաղաքականությունից՝ արքայի հասցեին տարածել են զրպարտանքներ [այդ թվում նաև հայոց Ներսես Մեծ կաթողիկոսին (353-373) թունավորելով սպանելու կեղծ պատմությունը], որոնք ընդունվել են որպես ճշմարտություն:

Բանալի բառեր՝ սկզբնաղբյուր, լեգենդ, Փառանձեմ, Օլիմպիա, սպանություն, թունավորում, զրպարտություն:

НАСКОЛЬКО РЕАЛЬНЫ ОБВИНЕНИЯ ЦАРИЦЫ ПАРАНДЗЕМ В «УБИЙСТВЕ» ОЛИМПИИ

Ашот Манучарян

Резюме

Известно, что армянский историограф V века Фавстос Бузанд в своих трудах апеллировал не только к письменным первоисточникам, но и к народным устным сказаниям, легендам, песням, в которых нередко искажались исторические факты и события. Примером подобного искажения исторических реалий является мнимое отравление римлянки Олимпии – супруги армянского царя Аршака II (345-368) другой его супругой – царицей Парандзем.

Однако из православного агиографического памятника «Житія Святыхъ» узнаём, что армянская царица Олимпия не была убита. После смерти своего мужа – Аршака II она вернулась в Римскую империю, где вышла замуж во второй раз и родила Святую Олимпиаду Диаконису (370-409), которая была ближайшей помощницей и ученицей Иоанна Златоуста (347-407). На наш взгляд, история «злодейства» Парандзем была придумана противниками внутренней политики, проводимой ее сыном, армянским царем Папом (353-373). С именем царя Папа связана также ложная история отравления Католикоса Нерсеса Великого (353-373).

Ключевые слова – первоисточник, легенда, Парандзем, Олимпия, убийство, отравление, клевета.

HOW REAL ARE THE ACCUSATIONS AGAINST QUEEN PARANDZEM IN THE "MURDER" OF OLYMPIA?

Ashot Manucharyan

Abstract

It is well known that the Armenian historian Pavstos Byuzand (V c.) made use of not only written sources but also folk oral talks, legends, songs. The latter case has led to a lot of inaccuracies and deteriorations of the historical events. One of them concerns the enmity between the two wives of King Arshak II (345-

368), the Armenian Parandzem and the Roman Olympia. The enmity between them deepens to the point when Parandzem organized the assassination of Olympia via poisoning. To realize the act Parandzem cooporates with the palace presbytery Mrjyunik. He realised the act of assassination by adding poison on the Communion Bread.

Whilst, due to the Russian Orthodox hagiography book called 'Hagiography of Saints', the Armenian Queen Olimpia was not assassined at all. After the death of her husband, King Arshak II, Olympia returned to the Roman Empire. Here she got married for the second time and gave birth to St. Olympiada Deaconness (370-409), who was the close and devoted pupil and assistant of St. John Chrystostom (347-407).

We think that the story of the assassination by Parandzem was made up from the beginning due to the political issues by the ruling circles of that time who were dissatisfied by her son King Pap (353-373) and the domestic policy carried out by the King. The same circles blamed everything on the King and even they pushed forward the fact that the King poisoned the Catholicos Nerses IV, Klayetsi called Shnorhali (353-373). Unfortunately that fake fact then was accepted and even fixed as a true one.

Key words – primary source, legend, Parandzem, Olympa, assassination, poisoning, blaiming.